

Գ. Կ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԼԵՆԻՆԸ ԵՎ ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Համաշխարհային պրոլետարիատի մեծ ուսուցիչ Վլադիմիր Իլյիչ Լենինը իր աշխատությունների մեջ մի շարք առիթներով անդրադարձել է լեզվական հարցերին, ուսաց լեզվի մաքրության և անաղարտության խնդրին։ Բացի լեզվական ընդհանուր խնդիրներից, նա հատուկ հետաքրքրություն ու սեր է ցուցաբերել դեպի բառարաններն ու բառարանագրական աշխատանքները։ Դեպի բառարաններն ունեցած հետաքրքրությունը Լենինի մոտ զարթնել է դեռ վաղ տարիքից։

Վ. Ի. Լենինի քույրը՝ Մ. Ուլյանովա-Նիզարովան դրում է. «Դասերն ստուգելու համար հայրս նրան երբեմն տանում էր իր առանձնասենյակը և ամբողջ տետրից հարցնում լատիներեն բառեր, բայց Վոլոդյան սովորաբար բոլորն իմանում էր»¹։ «Լենինը,— գրում է Ն. Կ. Կրուպսկայան,— գիտեր շատ օտար լեզուներ, ևավ գիտեր գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն, ուսումնասիրում էր դրանք, այդ լեզուներից թարգմանություններ էր կատարում, կարդում էր լեհերեն, իտալերեն, նա կարողանում էր «հանգստի համար» ժամերով կարդալ որևէ բառարան»²։

Վ. Ի. Լենինի գրասենյանի անբաժան գրքերի մեջ տեղ են գրավել բառարանները 1896 թ. փետրվարին, բանտից, իր քույր Աննա Իլյինիչուային նա գրում է. «Այժմ թարգմանություններ եմ կատարում գերմաներենից։ Այնպես որ կխնդրեի ուղարկել (բանտ. Ն. Կ.) Պավլովսկու բառարանը»³։ Իսկ երկու տարի հետո, արդեն սիրիյան

¹ Հարազատների հիշողությունները Վ. Ի. Լենինի մասին, Հայպետհրատ, Երևան, 1956 թ. էջ 15։

² Նույն տեղում, էջ 238։

³ Նույն տեղում, էջ 239։

աքսորավայրից պահանջում է անգլերենի, աշխարհագրական անունների և հատուկ անունների բառարաններ: 1899 թ. փետրվարի 19-ին մորը գրած նամակում կարդում ենք. «Ես ցանկանում եմ հիմնականորեն զբաղվել գերմաներենով: Խնդրում եմ ուղարկել ինձ ռուս գերմաներեն այն բառարաններից, որ մենք ունենք կամ լեզուների և կամ, լավ է Ռեյֆի ռուսերենից հվրոպական հրեք լեզուներով բառարանը, ես դուրս կգրեի Պավլովսկու ռուս-գերմաներեն բառարանը, բայց պարզվեց, որ այն լույս է տեսնում պրակներով և առայժմ հրատարակված է միայն կեսը»¹:

Գ. Մ. Կրժիժանովսկին իր հիշողությունների մեջ գրում է. «Բավական էր, որ Վլադիմիր Իլյիչի մոտ ասվեր որևէ անժանոթ ռուսական բառ, ապա նա անմիջապես հարց էր առաջ քաշում. «Որտեղից եք դուք վերցրել այդ բառը, ճիշտ եք արդյոք գործածում, և անմիջապես նետվում էր դեպի Դալի բառարանը»²:

Լենինի գրադարանավարուհի Շուշանիկ Մանուչարյանցը իր «Աշխատանքը Վլադիմիր Իլյիչի գրադարանում» հիշողությունների մեջ գրում է. «Վլադիմիր Իլյիչը շատ էր սիրում բառարաններ և դրանցից ոմներ մեծ քանակությամբ: Մի անգամ ես առաջարկեցի ձեռք բերել նոր հանրագիտական բառարանը: Վլադիմիր Իլյիչը, որ այդ ժամանակ գիրք էր թերթում հարցրեց. — Իսկ դուք ստույգ գիտե՞ք, որ այդպիսի հրատարակություն կա:

— Իհարկե:

— Դե՛, ձե՛ռք բերեցեք:

Վլադիմիր Իլյիչի խնդրանքով նրան ուղարկեցին ուկրաիներեն մի բառարան: Մեջ եմ բերում ևս երկու երկտող. «Գրադարանավարուհուն. խնդրում եմ ինձ համար գտնել բուլղարա-ռուսերեն բառարան. մի ուրիշ անգամ՝ խնդրում եմ ինձ համար գտնել և կազմել իտալա-ռուսերեն բառարան»³:

Լենինը բառարանների նկատմամբ քննադատական մոտեցում է հանդես բերում: 1902 թվականին Մարիա Իլյինիչնային ուղղած նամակում խորհուրդ է տալիս անգլերեն սովորել Տուսսենովի «Այժմ Տուսսենն ունի բառարաններ՝ արժանապատիվ ճանաչողով: Մանյաշային շատ եմ փորձուրդ տալիս գնել, որովհետև մեր Ալեքսանդրովը շատ ստեղծ է ասում»⁴: Մի ուրիշ առիթով դարձյալ խոսելով Ալեքսանդրովի անգլերեն-ռուսերեն բառարանի անհաջողության

¹ В. И. Ленин, Письма к родным 1894—1919 гг. Москва, 1931, стр. 184.

² Г. М. Кржижановский, Воспоминание о Ленине, 1933, стр. 106.

³ Հիշողություններ Վ. Ի. Լենինի մասին, 2 մաս, Երևան, 1958, էջ 728.

⁴ В. И. Ленин, Письма к родным, стр. 287.

մասին, գտվում է Մյուրեի գրպանի անգլերեն-գերմաներեն բառարանը և խորհուրդ տալիս դնելու այն:

1920 թ. Ռումյանցևի թանգարանի գրադարանին լենինը գրում է. «Եթե, ըստ կանոնի, տեղեկատու հրատարակությունները տուն չեն տրվում, ապա հնարավոր չէ՝ արդյոք ստանալ երեկոյան, գիշերը, երբ գրադարանը փակվում է: Առավոտյան կվերագարձնեմ, 1 օրով տեղեկանքների համար...»¹ Իսկ ի՞նչ է պահանջում նա:

«1) Հունարեն լեզվի երկու լավագույն, առավել լիակատար բառարաններ հունարենից գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն կամ անգլերեն:

2) Լավագույն փիլիսոփայական բառարաններ, փիլիսոփայական տերմինների բառարաններ, գերմաներենը, կարծեմ, էյսլերի-նը, անգլերենը, կարծեմ, Բուդվինի (Baldwin), ֆրանսերենը, կարծեմ, Ֆրանկինը (եթե ավելի նորը չկա), ռուսերենը՝ որը որ կանորդից»²:

Վ. Ի. Լենինն իր անմիջական աշխատանքների համար բացի դանազան բառարաններից հետաքրքրվելուց ու օգտագործելուց, նաև անձամբ մասնակցել է բառարանային աշխատանքներին:

«Գրանատ» հանրագիտարանի խմբագրությունը լենինին է հանձնարարում գրելու «Մարքսի և մարքսիզմի մասին» հոդվածը: Այդ կապակցությամբ հանրագիտարանի խմբագրության քարտուղարին 1914 թ. նոյեմբերի 17-ին լենինը գրում է հետևյալ նամակը.

«Մեծարգո վոլեգա:

Այսօր ես պատվիրած բանդերով 2 ձգ. հմ ուղարկել բառարանի համար Մարքսի և մարքսիզմի մասին հոդվածը², ըս չեմ, որ պետք է դատեմ, թե ինչքանով է հաջողվել ինձ լուծել 75000 կամ մոտ այդքան տառերի շրջանակներում շարադրանքը սեղմելու դժվարին խնդիրը: Նշեմ, որ հարկ եղավ գրականությունը խիստ սեղմել (15000 ուտիմատիվ էր), և ես պետք է տարբեր ուղղություններից ընտրեի էականը (իհարկե Մարքսի կոդեֆիկացիայի գերակշռությամբ): Դրովար էր հրաժարվել Մարքսի շատ ցիտատներից»³:

Մարքսի և մարքսիզմի մասին հոդվածը «Գրանատի» խմբագրության ուղարկելուց հետո լենինը մի շարք փորձեր է կատարել իր աշխատակցությունը շարունակելու համար, բայց դրական ար-

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, 4-րդ հրատ. հատոր 35, էջ 491:

² Լույս է տեսել Գրանատ հանրագիտական բառարանի XXVIII հատորում Վ. Իլինի ստորագրությամբ էջ 219—246:

³ Վ. Ի. Լենին, Երկեր, 4-րդ հրատ. հատոր 35, էջ 177:

դյուցնքի շի հասելու ահալ կլինեն, աշխատանք ունենալ հանրագիտական բառարանի համար,— գրում է նա 1914 թվի դեկտեմբերի 22-ին քրոջն ուղղած նամակում,— սակայն հաջողեցնել այդ, երևի, հեշտ բան չի, եթե անձամբ առիթ չունենաս ծանոթանալու խմբագրության քարտուղարի հետ¹։ Այդ ծանոթությունը չկար, և երբ վլադիմիր Իլյիչը անմիջականորեն դիմում էր «Գրանատի» խմբագրությանը, ապա մեծ մասամբ չէր ստանում նույնիսկ իր նամակների պատասխանը։

Վ. Ի. Լենինը ոչ միայն ինքն է գրադվել բառարանագրական աշխատանքներով, այլև ցանկացել է այդ գործին ներգրավել նաև Ն. Կ. Կրուպսկայային։ 1915 թ. փետրվարի 4-ին «Գրանատ» հանրագիտական բառարանի քարտուղարին Լենինը գրում է. «Ես ինձ թույլ եմ տալիս առաջարկել իմ ծառայությունը բառարանի խմբագրությանը, եթե հետագա հատորներից կան դեռ չբաշխված հոդվածներ», եվ ապա «մեծ հաճույքով կստանձնեի հոդվածներ քաղաքատնտեսության, քաղաքականության, բան(վորական) շարժման, փոխոսփայություն և այլ հարցերի վերաբերյալ։ Իմ կինը Ն. Կրուպսկայա անվան տակ գրել է մանկավարժության վերաբերյալ..... Նա սիրով իր վրա կվերցնեի հոդվածներ այդ հարցերի վերաբերյալ²։

Մ. Ի. Ուլյանովային հղած Կրուպսկայայի 1916 թվականի փետրվարի 8-ի նամակից պարզվում է, որ ինքը «Աշխատանքային դպրոց» հոդվածը գրել է «Գրանատ» հանրագիտարանի համար։

Հանրագիտարանին մասնակցելու ցանկության՝ Լենինի հիմնական նպատակն այն էր, որ նրա միջոցով պրոպագանդեր մարքսիստական գաղափարները։

Հանրագիտական բառարանի հանձնարարականը սիրով կատարելուց հետո Լենինը իր աշխատությունների մեջ ավելի խստապահանջ է դառնում և ավելի շատ բառեր ու մտքեր է պարզաբանում ու բացատրում։ Այս բացատրվում է նրանով, որ ռևոլյուցիայի նախօրյակին և առաջին տարիներին ավելի պահանջ էր զգացվում պարզեցնելու, ավելի հասկանալի դարձնելու խոսքը, ասելիքը, քանի որ թե՛ պրոլետարիատը և թե՛ գյուղացիությունը այդ ժամանակ գտնվում էին կուլտուրական ավելի ցածր աստիճանում և լեզվի պարզեցումն անհրաժեշտ էր դյուրացնելու համար «մեր ազդեցությունը մասսաների վրա», ինչպես նշել է Լենինը։

Հոկտեմբերյան ռևոլյուցիայից հետո, քաղաքացիական կոռիվ-

¹ Վ. Ի. Լենին, Նամակներ հարազատներին, 1934 թ. էջ 131.

² Նույն տեղում, էջ 134.

ների եռուն պահին ինքնի ուղադրութիւնն է գրավում Դալի բառարանը՝ ոռոսական բառարանագրութեան այդ նշանավոր հուշարձանը։ Նադեժդա Կոնստանտինովնայի վկայութեամբ ինքինը դեռ վաղ հասակից ծանոթ է եղել Դալի բառարանին, բայց խորապէս և ի մոտոնա ծանոթացել է 1920 թ.։ Ահա այդ կապակցութեամբ ինքինը դրում է.

«Ընկ. Լուսաշարսկի։

Վերջերս ինձ վիճակվեց — դժբախտաբար և համոթ ինձ, առաջին անգամ,— ծանոթանալ Դալի նշանավոր բառարանի հետ։

Հիանալի բան է, բայց չէ՞ որ գա մաքայնական բառարան է և հնացել է։ Ժամանակը չէ՞ արդոք ստեղծել իսկական ոռոսաց լեզվի բառարան, այսինքն, այնպիսի բառերի բառարան, որոնք գործ են ածվում այժմ և կ'աւսիկնե՞րի կողմից, Պուշկինից մինչև Գորկին։

Ի՞նչ կ'լինի, եթե դրա համար նստեցնենք 30 գիտնականների, նրանց տալով կարմիրբանակայինի մթերաբաժին։ Ինչպե՞ս կ'վերաբերվեք Դուք այդ մտքին։

Ռոսաց կ'լսուիկ լեզվի բառարան։

Առանց աղմուկ բարձրացնելու խոսեցեք գիտականների հետ, եթե դժվար չէ, և հաղորդեցեք ինձ Ձեր կարծիքը՝։

Նոր բառարան կազմելու միտքը այնուհետև դառնում է ինքնի մտածումների կենտրոնական հարցերից մեկը։ 1920 թ. հունվար ամսից սկսած ինքինը ամբողջ մեկ և կես տարի անընդհատ անամականեր ու երկտողներ է դրում Լուսաշարսկուն, Պուշկինսկուն, Լիտկենսին և հետաքրքրվում բառարանի աշխատանքներով, հրահրում, խորհուրդներ տալիս։

Ինքինը առանձնապէս շեշտը դնում է ժամանակակից բառարան ստեղծելու վրա։ «Ընկ. Լիտկենս։ Մոռացա տեսակցութեան ժամանակ խնդրել Ձեզ ստուգելու,— գրում է ինքինը 1921 թ. մայիսի 6-ին,— թե ինչպէս է ժամանակակից (Պուշկինից մինչև Գորկին) ոռոսաց լեզվի բառարան (համառոտ) կազմող գիտնականների հանձնաժողովի գործը։

Ես վաղուց, շատ անգամ եմ այդ մասին պայմանավորվել Պուշկինսկու և Լուսաշարսկու հետ։

Արվում է արդոք։ Հասկապէս ի՞նչ։ Իմացեք և գրեցեք ստույգ², նույն Լիտկենսին գրած մի ուրիշ նամակում մանրամասն նշված է բառարանի կոնկրետ պրոֆիլը։

¹ Ինքին, Երկեր, հատոր 35, էջ 421։

² Նույն տեղում, էջ 527։

«Օգտվեցեք Պոկրովսկու հանգստից, որպեսզի նրան չծանրաբեռնելով վարչարարութեամբ, սկսեք ուսաց լեզվի բառարան կազմելու աշխատանքը:

1) Նշանակեցեք 3—5 լավագույն ֆիլոլոգներից կազմված հանձնաժողով: Նրանք պետք է երկու շաբաթում մշակեն վերջնական հանձնաժողովի (աշխատանքի համար) պլանը, նրա կազմը, ժամկետը և այլն:

2) Առաջադրանքը՝ ուսերեն լեզվի (Պուշկինից մինչև Գորկին) համառոտ (փախ՝ «Լյարուա»-ի նմուշով) բառարան: Օրինակելի, ժամանակակից: Նոր ուղղագրությամբ:

3) Նրանց (3—5) զեկուցման հիման վրա գիտա-ակադեմիական կենտրոնը պետք է հաստատի: Այդ դեպքում աշխան մոտերքը կըսկըսենք¹:

Մի ուրիշ առիթով Լենինը նշում է, որ «Բառարանի համար մեջբերումները շատ կարևոր են (հատկապես մարքսիզմի առավել վիճելի հարցերում, որոնց թվին են պատկանում առաջին հերթին փոփոխությունն ու ագրարային հարցը»²:

Լենինի իղձը՝ ունենալ ժամանակակից ուսաց լեզվի բառարան, որ ընդդրկեր Պուշկինից մինչև Գորկին, իրականացավ նրա մահից հետո: Ուշակովի գլխավորությամբ կազմած ուսաց լեզվի քառահատոր բացատրական բառարանը այդ իղձերի իրականացումն էր:

Մի՞նչ այժմ բերված փաստերը վկայում են, թե ինչպես Լենինին հետաքրքրել են բառարանները, բառարանագրական աշխատանքները, և նա որքան հոգատար վերաբերմունք է ունեցել այդ գործի նկատմամբ: Սակայն այս բոլորից դուրս Լենինին մտահոգել է որքան հնարավոր ք պարզեցնել լեզուն, հասկանալի դարձնել ժողովրդական լայն մասսաներին: Այս տեսակետից բնորոշ են նրա խորհրդածությունները ուսաց լեզուն մաքրելու մասին:

«Ռուսաց լեզուն մենք փշացնում ենք,— գրում է Վ. Ի. Լենինը: Ստար բառերը գործ ենք ածում առանց անհրաժեշտության: Այդ բառերը սխալ են գործ ածում: Ինչի՞ համար ասել «дефекты», երբ կարելի է ասել недочеты կամ недостатки կամ пробелы...

Խոստովանում եմ, որ եթե օտար բառերի առանց անհրաժեշտության գործածությունը ինձ զայրացնում է (որովհետև դա դժվարացնում է մեր ազդեցությունը մասսայի վրա), ապա թերթերում գրողների որոշ սխալներն արդեն բոլորովին կարող են համբերու-

¹ Լենին, Երկեր, հատոր 35, էջ 532,

² Նույն տեղում, էջ 177—178:

թյունից հանելու Օրինակ՝ «будиловать» բառը գործ են ածում գրք-
պրոնիւ, անհանգստացնելու, արթնացնելու իմաստով: Բայց ֆրան-
սերեն «bouder» (բուդե) բառը նշանակում է «բարկանալ», «ենդա-
նալ»¹:

Լ'նինի այս խորհրդածությունները միայն լեզվի մաքրման
խնդրին չեն վերաբերում, այստեղ շոշափված է նաև բառարանային
հարց: Մի կողմից նշված է, որ будировать բառը սխալ է գործած-
վում, մյուս կողմից՝ ֆրանսերեն boudier բառի արտասանությունը
և իմաստը:

Վ. Ի. Լենինի աշխատություններում շուրջ 500 շատ մեծ կարե-
վորություն ունեցող բառեր բացատրված են, երբեմն ստուգաբան-
ված:

Վ. Ի. Լենինը իր աշխատություններում մի շարք, գլխավորապես
ոտար բառեր, զգալով, որ կարող են անհասկանալի մնալ, փակա-
գծված ձևով բացատրում է, տալիս է համապատասխան, իր մայ-
րենի լեզվով հոմանիշը, ինչպես՝ հոմոնիա (автономия, самоуправ-
ление—ինքնավարություն) XX—273. ֆիասկո (неудача, крах—
անհաջողություն, կրախ) XXIII—122. Գենտիլ (родовая или клас-
совая—տոհմային կամ կլանային) XXV—455, ալսպես նաև դեֆի-
նացիա, դեմիուրգ, ճիդրա և այլն:

Լենինը մի շարք լատեր հոմանիշով բացատրելը աննպատա-
կահարմար ու թեթի հասարակելով տվել է, դարձյալ փակագծված ձևով,
կապակցություններով բացատրություն. ալսպես՝ «Լենդլուդ (խոշոր
կալվածատեր)» XIX—352, «Հումանիտար (այսինքն՝ մարդասիրա-
կան)» XVIII—409, «Սիտուացիա (կոնկրետ իրադրություն)»
XXI—178: Հսճախ միևնույն բառը տարբեր գործերի մեջ նորից ու
նորից է բացատրված: «Պարցելլա (հողակտորիկ)» XXI—74, (մանր)»
XXI—76, «Պարցելլա (թզուկային)» XIX—447, «Կոալիցիա (միու-
թյուն)» XIX—427, «Դաշինք» XXVI—405, «Գրոսբաուն (խոշոր
գյուղացիներ)» XII՝ 399, իսկ մի այլ տեղում կատարված է ընդհա-
կառակը՝ «խոշոր գյուղացիություն (grossbauern)» XXXI—181:

Լենինը բառերի մի ուրիշ խմբի տվել է ավելի երկար բացա-
տրություն, ավելի պարզեցված ձևով: Բացատրվող բառերի մի մա-
սը բացատրված է այսինքն-ով, ալսպես.—«Արոտ, այսինքն՝ ար-
հեստական վիժում» XIX—278: «Բլանկներ, այսինքն՝ տպագիր դի-
մումներ, որոնց մեջ բուն խնդիրը տպագրված է և թողնված են բաց
տեղեր, որ այնտեղ գրվի ֆաբրիկայի անունը, թե ինչ առթիվ են

¹ Ленин, Соч., т. XXX, 1950, стр. 274.

նպաստ խնդրում, բնակավայրը, ստորագրությունը և այլն» *II—59*: «Բոլկոտ նշանակում է՝ հրաժարվել լինություններին մասնակցելուց» *X—112*, «Բյուրուկրատ՝ մասսաներից կտրված, մասսաներից չեր կանգնած...» *XXV—635*, մի այլ տեղում՝ «բյուրուկրատիա (չինովնիկություն)» *XXV—292*, «Դեպրեսիա այսինքն՝ արդյունաբերության անկում» *XVIII—321*, «Դիսկուսիա—այդ նշանակում է քննարկում» *XXX—540*, «Եվրոպականացնել այսինքն՝ ըստ եվրոպականի վերակառուցել» *XIX—228*, «Իլյուզիա, պատրանք, այսինքն՝ իարժուսիկ պատկերացումներ» *XII—616*, մի այլ տեղում՝ երազ, ինքնախաբեություն *XXII—7*, «Իմպերիալիստական այսինքն՝ կողոպտչական, օտար ժողովուրդներին կեղծող» *XXI—367*, «Լոկալումներ այսինքն՝ խոսքը մեկ արած ձեռնարկատերերի կողմից բանվորների մասսայական վտարումը...» *XX—252*, «Մրագիր նշանավում է այն ամենի համառոտ, պարզ ու ճշգրիտ հայտարարությունը, որին ձգտում է պարտիան և որի համար պայքարում է նա» *VI—502*, «Ռեզենտ այսինքն՝ ժամանակավոր ցար» *XXIII—470*, «Ռեստավրացիա այսինքն՝ հին, նախառեղյուցիոն կարգերի վերականգնում» *X—414*, «Սեպարատիզմ այսինքն՝ անջատում և անառնանք» *XIX—86*, «Սկզբունք, այսինքն՝ հիմնական հայացքներ, քաղաքական համոզմունքներ» *XVIII—408* և այլն:

Մի շարք դեպքերում ուղղակի համառոտ շարադրված է բառի բացատրությունը, ինչպես՝ «Ազգայնացումն ամբողջ հողի հանձնումն է պետության ի սեփականություն» *XIII—428*, «Անտիսեմիտիզմ է փոշվում հրեաների դեմ թշնամություն տարածելը» *XXIX—299*, «Բլոկադա—պաշարել, ամեն կողմից կտրել ամբողջ աշխարհից» *XXXII—450*, «Մարքսիզմը՝ Մարքսի հայացքների և ուսմունքի լիարժեք ներկայացում» *XXI—48*, «Միապետություն որպես մեկի իշխանություն» *XXIX—591*, «Ռեաբիլիտացիա—պատիվը վերականգնելը» *XXV—183*, Այսպես նաև բացատրված են ապադասակարգային, ալտրոսիսական, գնոսեոլոգիա, դեկրետ, դեպարամենտական, դիֆերենցիացիա, էֆստերիտորիալ, ավտոնոմիա, պոլետար, ռենտա, ռեֆերենդում և մի քանի տասնյակ այլ բառեր:

Երբեմն միևնույն պարբերության մեջ բացատրված է մի քանի բառ. «Լիկվիդատորությունը՝ պարտիական ինտելիգենցիայի մի որոշ մասի փորձերն են՝ լիկվիդացնելու» (այսինքն՝ լուծելու, քայքայելու, վերացնելու, դադարեցնելու) «պարտիայի գոյություն ունեցող կազմակերպությունը և փոխարինելու այն անձն միավորումով՝ լեգալության» (այսինքն՝ օրինականության, բացահայտ) գոյության» «շրջանակներում ինչպես էլ որ լինի, թեկուզ վերջինս գնվեր

պարտիայի ծրագրից, տակտիկայից և տրադիցիաներից» (այսինքն՝ առաջվա փորձից) «բացահայտորեն հրաժարվելու գնով» XIX—169:

Լենինի աշխատությունները մեր ժամանակի ամենալավագույն գործերն են բառարանների փիլիսոփայական և քաղաքական տերմինները բացատրելու համար: Այդ աշխատություններում տրված են բազմաթիվ բառերի-տերմինների մարքսիստական բնորոշումը: Վ. Ի. Լենինը իր աշխատությունների մեջ գործ է ածում մի կողմից արդեն ավանդական դարձած քաղաքական նշանակություն ստացած տերմիններ, ինչպես՝ ռեակցիա, ուղղություն, խմբակ և այլն, և մյուս կողմից՝ ինքր մի շարք բառեր գործ է ածում նոր, քաղաքական նշանակությամբ:

Մեզ այսօր հետաքրքրում են ավելի շատ այն բառերը, որոնք նոր նշանակություն են ստացել Լենինի աշխատություններում, այն բառերը, որոնք սովորական, առօրյա գործածական վիճակից ստացել են քաղաքական, տնտեսական, փիլիսոփայական տերմինի արժեք: Նմանօրինակ բառերի թվին են պատկանում դասակարգ, գործադուլ, թուլցիկ, անտագոնիզմ և նման բառերը:

Բառերի մի ամբողջ խումբ Լենինի աշխատություններում ստացել է ավելի լայն բացատրություն, որոնցից շատերը դարձել են մեր բառարանների սեփականությունը: «Աքսուլյուտիզմ—անսահմանափակ ինքնակալական իշխանություն» XVIII—467: Հ. Դադբաշյանի և այլ բառարաններում այդ բառը թարգմանված է՝ արձակապետություն, անսահմանակապետություն: «Ակտիվ բոյկոտը նշանակում է ոչ թե սոսկական հրաժարումն ընտրություններից, այլ ընտրական օղորդների ամենալայն օգտագործում սոցիալ-դեմոկրատական ագիտացիայի և կազմակերպման համար» X—112: «Անենքսիոնները այսինքն ազգային անկախության խախտումները (որովհետև աններսիստ, ոչ այլ ինչ է, եթե ոչ ազգերի ինքնորոշման խախտում)» XXII—398, մի այլ տեղում փակագծված բացատրում է՝ «զավթում» XXIV—548: «Աուտենտիկ մեկնաբանություն, այսինքն՝ այնպիսի մեկնաբանություն, որ հեղինակից է բխում» XXVII—313: «Գիտական մարքսիզմ, այսինքն՝ մի ուսմունք, որով մշտապես ղեկավարվում է մեր պարտիան և մանավանդ ռեվոլյուցիայի ժամանակ» XXIX—242: «Դիկտատուրա նշանակում է... ուժի և ոչ թե օրենքի վրա հենվող անսահմանափակ իշխանություն» X—261, կամ՝ «հասարակության մի մասի տիրապետությունն է ամբողջ հասարակության վրա, ըստ որում անմիջականորեն բռնության վրա հենվող տիրապետություն» XXIII—80: «Էֆսպրոպրիատորների էֆսպրոպրիա-

չի՛ան ալսինքն՝ արտադրության միջոցների նկատմամբ կապիտալիստական մասնավոր սեփականությունը հասարակության սեփականություն դառնալու կապակցությամբ» XXV—544, «Կոմունիզմը հասարակության ավելի բարձր տեսակն է և նա կարող է զարգանալ միայն այն ժամանակ, երբ միանգամայն ամրացած կլինի սոցիալիզմը» XXV—356, «Պետությունը—դա մի մեքենա է մի դասակարգի տիրապետությունը մյուսի վրա պահպանելու համար» XXIX—589, «Սոցիալիզմ—ն այն հասարակությունն է, որն աճում է կապիտալիզմից անմիջականորեն, նոր հասարակության առաջին տեսակն» XXX—356:

Լենինի աշխատություններում մի քանի բառերի բացատրությունները այնքան ընդարձակ են, որ բառարանի սահմաններից անցել են ավելի հանրագիտական բառարանի սահմանները, այսպես՝ «Բռնապարտիզմ»-ը իր հին նահապետական կամ ֆեոդալական, հասարակ և ամբողջական հենարանը կորցրած միապետության խուսանավելն է: Բռնապարտիզմը միապետության օբյեկտիվորեն անխուսափելի, Մարքսի և էնգելսի կողմից Եվրոպայի նորագույն պատմության մի ամբողջ շարք փաստերի հիման վրա հետազոտված էվոլյուցիան է ամեն մի բուրժուական երկրում» VI—331, մի այլ տեղում ավելի է մանրամասնում, գրելով «Բռնապարտիզմ» (ֆրանսիական երկու բռնապարտ կայսրների անունով) կոչվում է այնպիսի կառավարությունը, որն աշխատում է երևալ ոչ-պարտիական, օգտագործելով կապիտալիստների և բանվորների պարտիաների միմյանց դեմ ուղղված ծայր աստիճան սուր պայքարը, իրականում ծառայելով կապիտալիստներին՝ այդպիսի կառավարությունն ամենից շատ իսարում է բանվորներին խոստումներով և մանր ողորմություններով» XXV—296, «Բուրժուա նշանակում է սեփականատեր: Բուրժուազիա՝ բոլոր սեփականատերերը միասին, խոշոր բուրժուա նշանակում է խոշոր սեփականատեր: Մանր բուրժուա՝ մանր սեփականատեր: Բուրժուազիա և պրոլետարիատ՝ միևնույնն է, թե սեփականատերեր և բանվորներ, հարուստներ և չունեորներ, ուրիշի աշխատանքով ապրող մարդիկ և ուրիշների համար վարձով աշխատող մարդիկ» VI—473, «Գաղութներ—այսինքն՝ այնպիսի երկրներ, որտեղ արդյունաբերությունը թույլ է զարգացած, որոնք աչքի են ընկնում, շատ թե քիչ նահապետական կենցաղով, որտեղ կարելի է վաճառահանել արդյունաբերության արտադրանքներն ու դրանով լավ փող վաստակել» IV—480, «Դասակարգեր կոչվում են մարդկանց մեծ խմբերը, որոնք տարբերվում են հասարակական արտադրության պատմականորեն որոշ սխտեմում իրենց գրաված տե-

դով, արտադրության միջոցների նկատմամբ իրենց ունեցած (մեծ, մասամբ օրենքներով ամրապնդված և ձևավորված) վերաբերմունքով, աշխատանքի հասարակական կազմակերպման մեջ իրենց ունեցած դերով և, հետևաբար, հասարակական հարստության այն բաժնի ստացման եղանակներով ու շահերով, որ իրենց արտադրության տակ ունենւ։ Դասակարգերը մարդկանց այնպիսի խմբերն են, որոնցից մեկը կարող է յուրացնել մյուսի աշխատանքը հասարակական տնտեսության որոշ կացութաձևի մեջ նրանց տեղի տարբերության շնորհիվ» XXIX—515:

«Դիալեկտիկա, այսինքն՝ ուսմունքը զարգացման մասին, իր առավել լրիվ, խորը և միակողմանիությունից աղատ ձևի մեջ, ուսմունքը մարդկային գիտելիքի հարաբերականության մասին, գիտելիք, որը մեզ տալիս է հավիտենապես զարգացող մատերիայի արտացոլումը» XIX—5: Մի այլ առիթով՝ «ըստ Մարքսի «Գիտությունն է ինչպես արտաքին աշխարհի, այնպես էլ մտածողության շարժման ընդհանուր օրենքների մասին» XXI—53: «Կոնցեպիա—պետության պայմանագիրը այն կապիտալիստի հետ, որը հանձն է ստանում կազմակերպել կամ կատարելագործել արտադրությունը (օրինակ՝ փայտի հայթայթումը և լուարկումը, ածխի, նավթի հանույթը և այլն), դրա դիմաց տալով պետությանը արտադրվող արդյունքի մի մասը, իսկ մյուս մասը ստանալով փրկւ շահույթ» XXXII—471: «Կոոպերացիա, այսինքն՝ մանր գյուղացիների ընկերություններ» XXI—75: Իսկ այլ առիթով ավելի մանրամասնում է՝ «Սպառողական կոոպերացիա է կոչվում բանվորների և գյուղացիների միավորումը՝ նրանց համար անհրաժեշտ մթերքներ ձեռք բերելու և բաշխելու նպատակով: Արհեստագործական կոոպերացիա կոչվում է մանր հողագործների կամ տնայնագործների միավորումը՝ զանազան տեսակ, ինչպես հողագործական մթերքներ (օրինակ՝ բանջարեղեն, կաթնամթերքներ և այլն), այնպես էլ ոչ հողագործական մթերքներ (արդյունաբերության ամեն տեսակ արտադրանքներ, փայտի, երկաթի, կաշվի շինվածքներ և այլն) արտադրելու և վաճառահանելու նպատակով» XXXII—473: «Մունիցիպալիզացիա նշանակում է—գյուղացիների սեփականությունն իրենց հողաբաժինների նկատմամբ և զեմստվոններին հանձնված կալվածատիրական հողերի վարձակալությունը գյուղացիների կողմից: Ըստ էության այդ ինչ որ մի միջին բան է իսկական ագրարային ռեուլյուցիայի և կադետական ագրարային ռեֆորմի միջև» X—391:

«Շանտաժ է կոչվում փող կորզելը՝ սպառնալով մերկացնել այս կամ այն փաստերը կամ հնարված «պատմությունները», որոնք կա-

րող են անհաճո լինել մերկացվողին, կամ սպառնալով նրան որևէ տհաճութուն պատճառել: Քաղաքական շահնախը մերկացնելու սպառնալիք է կամ մերկացումն է իրական, բայց ավելի հաճախ հնարովի «պատմությունների», որոնց նպատակն է, հակառակորդին վնաս հասցնել, զրպարտել, խլել կամ դժվարացնել նրա քաղաքական գործունեության հնարավորությունը» XXV—323:

«Ռեֆորմիզմն այն է, որ մարդիկ սահմանափակվում են այնպիսի փոփոխությունների ազդեցությամբ, որոնք չեն պահանջում վերացնել հին, տիրապետող դասակարգի գլխավոր հիմունքները, — փոփոխություններ, որոնք նամատեղելի են այդ հիմքերի պանդանևման նետ» XIX—194, իսկ ռեֆորմ—այսինքն՝ վիճակի բարելավում XIX—457: «Ռեֆորմներ են կոչվում այն փոփոխությունները, որոնք հին տիրապետող դասակարգի ձեռքից չեն գրավում պետական իշխանությունը: Հավադիր բնույթի փոփոխությունները կոչվում են փոթորիկ» XX—378: Մի այլ տեղում՝ «ռեֆորմները զիջումներ են, որ ստացվում են իշխող դասակարգից, պահպանելով նրա տիրապետությունը» XXIX—639: «Իմպերիալիզմ—ը կապիտալիզմի զարգացման բարձրագույն ստադիան է» XXII—183: «Իմպերիալիզմը կապիտալիզմն է զարգացման այն աստիճանում, երբ գոյացել է մոնոպոլիաների և ֆինանսական կապիտալի տիրապետությունը, աչքի ընկնող նշանակություն է ստացել կապիտալի արտահանումը, սկսվել է աշխարհի բաժանումը միջազգային տրեստների ձեռքով և ավարտվել է աշխարհի ամբողջ տերիտորիայի բաժանումը խոշորագույն կապիտալիստական երկրների կողմից» XXII—354, և վերջապես «Իմպերիալիզմն կապիտալիզմի պատմական հատուկ ստադիան է: Այդ առանձնահատկությունը եռակի է՝ իմպերիալիզմը (1)—մոնոպոլիստական կապիտալիզմ է, (2)—պարազիտային կամ նեխվող կապիտալիզմ է. (3)—մեռնող կապիտալիզմ է: Ազատ կոնկորենցիայի փոխարինումն մոնոպոլիայով՝ իմպերիալիզմի հիմնական տնտեսական գիծն է, էությունը» XXIII—130:

Մենք վերևում ասացինք, որ Վենինի բացատրություններն ու մեկնաբանությունները հետագայում օգտագործել են մեր բառարանագիրները. այսպես՝ «Словарь современного русского литературного языка» աշխատությունը իր անալիզով, բնագրերով, բառապաշարով և այլ բառահոգովածները ամբողջությամբ բացատրում և հիմնավորում է լենինի ասույթներով: Եթե ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի, Ուշակովի, Օժեգովի և այլ բառարանները, բառերի մի որոշ խմբի բացատրությունները տալիս՝ օգտագործել են լենինի գործերը, ապա ժամանակակից քաղաքական-փիլիսոփայական բա-

առարանների ամբողջ նյութը հագեցված է Լենինի մտքերով, Լենինի ստույթներով:

Վ. Ի. Լենինը մի շարք բառերի տվել է նոր իմաստ, քաղաքական իմաստ, այսպես, «Ընտրական կամպանիայի և ընտրական պլատֆորմայի մասին» հոդվածում գրում է. «Կան առանձին անձինք, կան ոչ մեծ խմբեր: Ուստի բջիջների (—բառ, որը լավ է արտահայտում այն միտքը, որ արտաքին պայմաններում պահանջում են ոչ մեծ, շատ ճկուն խմբեր, խմբակներ ու կազմակերպություններ) նախաձեռնական կազմումը պետք է լինի քուլտ սոցիալ-դեմոկրատների առաջին խնդիրը» XVII—337: Բջիջ բառի այս իմաստը նորոգվում է: Մինչ այդ ռուսական բառարանները ячеек բառը հղում են ячей բառին և բացատրում՝ փոսիկ, խորշ և այլն:

«Թևֆուլ»-ը, — գրում է Լենինը, — դեռևս պատրաստի հոսանք է: Թեքումն այն է, ինչ կարելի է ուղղել: Մարդիկ ճանապարհից քիչ շեղվել են, բայց դեռ կարելի է ուղղել: Այս էլ հենց, իմ կարծիքով, արտահայտվում է ռուսերեն Уклон (թեքում) բառով: Ընդգծելով այն, որ այստեղ դեռ չկա ինչ-որ վերջնական բան, որ գործը հեշտ ուղղելի է, մենք ուզում ենք նախազգուշացնել և հարցը դնել իր ամբողջությամբ ու սկզբունքորեն: Եթե մեկը գտնի ռուսերեն մի բառ, որն ավելի է արտահայտում այդ միտքը, խնդրեմ» XXXII—311: Ռուսերեն լեզվի մինչ ուշակովյան բառարանները այս առումը չունեն: Уклон-ը գործ է ածված իր պարզ, սովորական իմաստով և բնավ կապ չունի քաղաքական թեքման հետ:

Լենինին են պատկանում նաև մի շարք այժմ շատ տարածված բառեր, որպիսիք կազմել և կամ ֆիքսացիայի է ենթարկել ինքուր: Այսպես նոր տնտեսական քաղաքականությունն անցնելու կապակցությամբ կազմվեց նե՞ղ հապավումը: Հետագայում Լենինը այդ հապավումից զործածեց մի նոր բառ՝ նեպլան՝ նոր տնտեսական քաղաքականության պայմաններում աճող առևտրի, ներկայացուցիչ: «Այս բառը կազմված է «նե՞ղ»-ից, — գրում է Վ. Ի. Լենինը, — որ նշանակում է «новая экономическая политика» (նոր տնտեսական քաղաքականություն)» և «ման» հավելումից, որ նշանակում է «մարդ կամ այդ նոր տնտեսական քաղաքականության ներկայացուցիչ»: Լրագրական լեզվով այդ բառը սկզբում ծագեց, որպես կատակային անվանում մանր շարժու կամ մի մարդու, որն օգտվում է առևտրի ազատությունից՝ ամեն տեսակի շարաշահումների համար» XXXIII—482—83:

Բառերի այս խմբին են պատկանում նաև բուլլեթի և մենջեթի բառերը: Այս բառերը օգտագործված են առաջին անգամ Վ. Ի. Լենինի

աշխատություններում: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ Լենինը միշտ էլ անվանում է բուլճերիկ և մենշերիկ, ուրիշներն էին մեծ մասամբ բուլճերիստ և մենշերիստ ասում:

Լենինը իր աշխատություններում շատ հաճախ պայքարում է որոշ բառերի ու հասկացողությունների ոչ ճիշտ դորժածության դեմ: «Սոցիալ-դեմոկրատիան,— գրում է Լենինը «Սոցիալ-դեմոկրատիայի երկու տակտիկան դեմոկրատական ռևոլյուցիայի մեջ» աշխատությունում,— լիակատար իրավունքով պայքարել է և պայքարում է «Ժողովուրդ» բառի բուրժուա-դեմոկրատական շարարկության դեմ: Նա պահանջում է, որ այս խոսքով չքողարկվի ժողովուրդի ներսի դասակարգային հակամարտությունները շրմբռնելը» IX—128:

Լենինը «Ի՞նչ անել» աշխատության մեջ գործ է ածում տետև—«ական պայքար արտահայտությունը և լեջատակին բացատրում՝ «Թյուրիմացություններից խուսափելու համար նկատենք, որ հետագա շարադրման մեջ մենք ամենուրեք տնտեսական պայքար ասելով հասկանում ենք (մեզանում հաստատված բառագործածության համաձայն) այն «Գործնական-տնտեսական պայքարը», որ էնգելսը վերը բերված քաղվածքի մեջ անվանել է «Դիմադրություն կապիտալիստներին» և որ ազատ երկրներում կոչվում է պրոֆեսիոնալ, սինդիկալ կամ տրեդ-յունիոնիստական պայքար» V—526:

Լենինի աշխատությունների մեջ բառերի մի այլ խումբ ոչ միայն ղացատրված է և իմաստը պարզեցված, այլ և ստուգաբանված է: «Ազնուտիցիզմ (հունական «ա» — ոչ և «զնոսիս» գիտություն բառերից է,— գրում է Լենինը «Դեմոկրատիա—որպես ժողովրդի իշխանություն»), դեմոկրատիա տառացի, հունարենից թարգմանած հենց նշանակում է ժողովրդի իշխանություն» XXIX—591, «Ենտերնացիոնալիզմ—Ինտեր—մեջ, միջև. ին—ապ, ոչ, ինտերնացիոնալ—միջազգային, միջժողովրդագային, իննացիոնալ—ապազգային, ապաժողովրդական, անազգային, անժողովրդային» XX—9, «Կրեդո (հավատո հանգանակ)» XVI—41, մի այլ առիթով credo (կարդացվում է կրեդո», որ նշանակում է հավատո հանգանակ, ծրագիր, աշխարհայացքի շարադրում)» XI—566, Յունիուս բառիներեն նշանակում է՝ կրտսեր» XXII—409, «Ուտոպիա հունարեն բառ է եւս» հունարեն նշանակում է «ոչ», «տոպոս» տեղ: Ուտոպիա—տեղ— որը չկա, ֆանտազիա—հնարանք, հեքիաթ» XVIII—449: Այսպես պարզաբանված են նաև հեկատո, նոմաեդներ, զյուպիկում և ուրիշ բառեր:

Լենինի աշխատություններում հանդիպում ենք զգալի թիվ կազմող, այսպես կոչված, թեատր խոսքերի, որոնց համար օգտագործել

լ զանազան ժողովուրդների ասույթները: Օտար ասույթները նույն-
պես լրացատրված են լենինի աշխատություններում: Այսպես, օրի-
նակ՝ «De mortuis aut bene aut nihil — մեռածների մասին կամ
լիակապ է լուր, կամ չկալի ասել») XVI—415: «Divide ed inipere —
բաժանիր և իշխիր, ղեկիր անկարևորը, որպեսզի պահպանես էակա-
նը, ձախ ձեռքով տո՛ւր, աջով խլի՛ր» V—87, և այլն:

Լենինը շատ հաճախ բնագիտական, մաթեմատիկական և, հատ-
կապես, ռազմական մասնագիտական տերմինները գործ է ածել
քաղաքական իմաստով: Օրինակ՝ բանակ, շտաբ, գրոհ բառերը ռազ-
մական գործի բառերից վեր են ածվել քաղաքական բառերի: Այս-
պես էլ ավանգարդ բառը մինչև 1920-ական շրջանի բառարանները
նշում էին որպես ռազմական բառ և բացատրում առաջապահ ջո-
կատ (զորքի, նավատորմի), իսկ այժմ այդ բառը ունի իր նոր իմաս-
տը՝ առաջավոր մաս (դասակարգի կամ որևէ հասարակական խում-
բավորության), որն իր ետևից տանում է մասսային:

Քսաներորդ դարի առաջին քառորդում քաղաքական-փիլիսո-
փայական տերմինալոգիան Վ. Ի. Լենինի մեկնաբանություններով
ստացավ նոր, մարքսիստական բովանդակություն:

Քաղաքական, դիտական, փիլիսոփայական տերմինների լենին-
յան մեկնաբանությունը ունի խոշոր դաստիարակչական ու գիտա-
կան նշանակություն, իր կազմով անընդհատ թարմացող հասարա-
կության անդամների աշխարհայացքի կազմակերպման ու ձևավոր-
ման մեջ արտակարգ մեծ դեր, այդ պատճառով նման բառարաններ
կազմելիս նրանց հիմքում պետք է դնել բառերի ու տերմինների
լենինյան մեկնությունները, ստուգաբանություններն ու լրացատրու-
թյունները: